

11712

ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈՎԱՆՈՆՆԵՐ

Հաստատված ՀԽՍՀ Նոր-Ֆայազեսի Երգս-
նային գործադիր կոմիտեի 1937 թվի
հունվարի 26-ի նախ. նիստով



Նոր-Ֆայազեսի Երգարձկուվի սպարան

1 9 3 7




ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈՎԱՆՈՆՆԵՐ

Հաստատված ՀԽՍՀ Նոր-Ֆայազեցի Երզա-
նային գործադիր կոմիտեյի 1937 թվի
հունվարի 26-ի նախ. նիստում

11711

A I
8445



Նոր-Ֆայազեցի Երզգործկոմի սպարան

1 9 3 7

Գլաւլեաի Լազոր

Ե. 63

Տրամ 400 որին.

Հաստատված է Երզրագրոկոնֆերանսի
և Հոդժողկոմատի կողմից

ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

Հաստատված ՀՍՍՀ Նոր-Բայազետի Երզրանային գործադիր կոմիտեի 1937 թվի հունվարի 26-ի նախնիսուս

«Բարձրագնել կոյսնեստային դաեսերի բերատավորքունը, մեցնելով և պահպանելով կանոնավոր ցանֆաԵրզանառուքյուն, խորը հերկ, վաչնչացնելով մոլախոսերը, բնդարձակելով ու լավ մեակելով գեյերն ու աեմանավարը, ժամանակին ու խնամֆով կասարելով սխիսկական բույսերի Եարամեց մեակաւեր, ժամանակին բուգ տայով բամբակը, պարարացնելով հողը, թե անասնապահական տարակֆային ֆերմաների և թե կոյսնեստականի սնեստուքյան գումաղբով, հանֆային պարարտանյութերով, պաչար մղելով գյուղատեսեստական վնասառուների դեմ, ժամանակին ու խնամֆով հավաֆելով բերֆն տոանց կորուստի, պահպանելով ու մաֆելով վոռոգիչ կանոցումները, պահպանելով տնտանները, ճնկելով դաեսերը պահպանող տնտանաեսեր, խստիվ պահպանելով սեղակոն հողային որգանների սահմանված — ագրոսեխնիկական կանոնները» (Գյուղատեսեստական արտի սրինակելի կանոնադրուքյունը):

1. ՍԵՐՄԵՐԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏՈՒՄ

1) Սերմացուն պարտադիր կերպով զտել, կոնդիցիայից ցածր ցուցանիշներ ունեցող սերմացուն ցանելն արգելվում և (ծրունակություն 98⁰/0, մաքրություն 98⁰/0):

2) Ձառումը կատարել թե ցորենի և թե գարու տրիյերով, հաճարի սերմացուն ընտրել ձեռքով (պոչուկից մաքրելու համար):

3) Դրսից ներմուծվող սերմացուն պարտադիր կերպով բազմակողմանի անալիզը կատարելուց հետո թույլ տալ ներմուծելու:

4) Սերմացույի չոր ախտահանումը կատարել միայն մեքենայով, թույլ չտալով թիակներով ախտահանման ձեւը (մեքենաներ չլինելու դեպքում հարմարեցնել տակառներ ուղարկված նախագծով):

5) Կիսաչոր ախտահանումը կատարել գարու և հաճարի նկատմամբ:

6) Յեթե ցորենի սերմացույի մրիկով վարակվածության 0%-ը կազմում և մեկ, ապա այդ ցորենն ախտահանել կիսաչոր ձեւով ֆորմալինի միջոցով:

7) Ախտահանման նորմաներն ընդունել հետևյալը՝ չոր ախտահանում ցորենի նկատմամբ մեկ ցենտներ սերմին 150 գրամ ԱՖ պըրեպարատ, մեկ ցենտներ սերմին 75 գրամ դա-

վիդեյան փոշի, կիսաթաց ախտահանման գարու, հաճարի նկատմամբ մեկ տոննա սերմացույին վերցնել մեկ լիտր ֆորմալին լուծված 300 լիտր ջրի մեջ:

8) Արգելել սերմացույի պահպանումը հողերում, ամբողջ սերմացուն պահել պահեստներում:

9) Գալիք տարվա ցանքսերի տարածությունը լավորակ սերմացույով ապահովելու համար 37 թ. ընթացքում կատարել հատուկ սերմանոցների ցանքս՝ գարնանացան ցորենի ցանքսի 15⁰/0-ը, աշնանացան ցորենի 12⁰/0-ը, գարու և հաճարի ցանքսի 13⁰/0-ը:

10) Սերմանոցների հունձը, փոխադրումը, վալսումը կատարել առանձին ազրոպերսոնալ միջոցով, կատարել սերմացուների ապրողացիա:

11) 1937 թ. կատարել «կոնզիկ» ցորենի քնտրություն:

12) Կորնզանի բերքահավաքը սերմացույի համար կատարել սերմերի կանաչ վիճակում, յերբ ներքեվի 3—4 սերմերը դառնում են գորշագույն:

13) Որվա հնձած կորնզանը կապել խուրձեր և նույն ուրը փոխադրել դաշտից բրեզնետով ծածկված ֆուրգոններով կամ սայլերով:

14) 38 թ. աշնանացանը սանձանված ժամ-
կեսներին, լալորակ սերմերով ապահովելու հա-
մար 1937 թ. աշնանացանի բերքից առանձ-
նացնել 38 թ. համար անհրաժեշտ քանակու-
թյամբ սերմացու:

15) Սերմանույների ցանքսը կատարել 100
տոկոս մաքուր թյուն ունեցող սերմացու լով, սեր-
մանոցների սերմացուն պարտադիր կերպով ախ-
տահանել թաց ձեւով (Ֆորմալինով), սերմանոց-
ների ցանքսը կատարել պարարտացված, մոլա-
խոտերից մաքուր ցելի վրա, յարովիզացիայի
յենթարկված սերմացու լով և շարքացանով:

16) Վիկայի և կորնզանի ցանքսը կատա-
րել նիտրոգինով վարակված սերմացու լով:

17) Գարնանացան ցորենի ցանքսի 50 տո-
կոսը կատարել յարովիզացիայի յենթարկված
սերմացու լով:

18) Յարովիզացիան կատարել հետևյալ
վերայ՝ մեկ ցենտներ սերմացու ցորենի համար
տալ 31 լիտր շուր, յերեք նվազ, թրջելու տեղո-
ղությունը 24 ժամ:

19) Առաջին անգամ մեկ ցենտներ սերմացուն
թրջել, անել կույտ, խառնել նորից վարձնել կույտ,
յերեսի շերտը չորանալուց հետո տալ յերկրորդ
շուր: Նույնպես խառնել ու կույտ վարձնել, կա-
տարելով նույնը, ինչ վոր առաջին անգամն է:

Յերրորդ անգամ թրջելուց հետո դարձնելիլույտ,
յերեսի շերտը չորանալուց խառնել և փռել 20
սանտիմ. բարձրութեամբ:

Սերմանոցների սերմացուէն, ցորեն, գարի,
հաճար թաց ախտահանում կատարել 2-րդ ան-
գամ թրջելու հետ միասին: Գարու ախտահան-
ման համար նորմա ընդունել ֆորմալինի մեկ
մասին 3 մաս ջուր, կամ 10 լիտր մաքուր ջրին
32 խ. սանտիմ. 40 տոկոսային ֆորմալին:

Հացահատիկը 20 սանտիմ. շերտով պահել
5—7 որ և ամեն որ մեկ անգամ խառնել թիյով,
պահպանելով ջերմաստիճանը 10—12 (ջերմաս-
տիճանը վորոշվում է սերմացույի մեջ գրված
ջերմաչափով):

Վոչ սերմանոցների ցորենի սերմացուէն
նախքան յարովիղացիան ախտահանել ԱՖ պրե-
պարատով մեկ ցենտներին 150 գրամ:

Յարովիղացիա կատարվում է նախորոք
հաշվի առնելով թե վոր հողամասում և վոր որը
պետք է ցանվի, վորից հետո 5 որ առաջ կատար-
վում է թրջումը, միաժամանակ հաշվի առնելով
որվա ցանքսի արտադրանքը այն հաշվով, վոր
յարովիղացիայի յենթարկված սերմացուէն չմնա
ավելի քան 5—7 որ:

Յարովիղացիայի յենթարկված սերմացուէ-

յով ցանքսը կատարել պարտադիր կարգով շաք-
քացանով:

2. Հողի ՆԱԽԱԳԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՅԱՆՔՍԻ ՀԱՄԱՐ

ա) Հողի նախապատրաստում աշխատանքների համար

1) Շրջանում վաղ ցելի ավարտման ժամ-
կետը սահմանել վոչ ուշ քան հացահատիկային
ցանքսի հետ գուդընթաց, վաղ ցելի տակ դնել
ազատ բոլոր հողամասերը: Վաղ ցելի վարի խո-
րությունը սահմանել 18—20 ստմ.:

2) Լանջերի ավազոտ հողերի վարի խորու-
թյունը հարմարեցնել հողի կուլտուրական շեր-
տին, այդ խնդիրը յուրաքանչյուր անգամ հա-
մաձայնեցնել տեղական ագրոպերսոնալի հետ:

3) Վաղ ցելը կատարելուց հետո անմիջա-
պես փոցխել:

4) Վաղ ցելն ամառվա ընթացքում մշակել
այն հաշվով և այնքան անգամ, վոր նա լինի
մաքրված մոլախոտերից, մշակել վոչ պակաս 2
անգամ:

5) Վաղ ցելի կրկնավարը իբրև կանոն կատա-
րել լուշչիլնիկներով 10—12 ստմ. խորությամբ,
իսկ ավազային կամ չոր հողերում 8—10 ստմ.
խորությամբ, լուշչիլնիկների պակաս լինելու
դեպքում այդ աշխատանքը կատարել թեվերը
հանած գուլթանով:

6) Յանքսից 7—10 որ առաջ կատարել հոգի վերջին փխրեցում, 8—10 ստմ. խորությամբ և փոցխել, ցանքսը կատարել 100 տոկոսը շարքացանով:

7) Իբրև կանոն աշնանացանը կատարել ձիայն վաղ ցելի վրա:

բ) Հողի նախապատրաստումը գաճնանացանի համար

Գարնանացանը կատարել՝ ա) ցրտահերկի վրա, բ) շարքահերկ բույսերից հետո, գ) համատարած բույսերից հետո, ընտրելով համապատասխան նախորդները խոսպանացած հողերում.

1) Բոլոր գեպքերում (առվույտից, կորընգանից կամ յերկարատև խամից հետո), արտի հիմնական վարը կատարել 20—22 սմտ. ամռան վերջում (բերքնավաքից հետո), վարից հետո փոցխել, փոցխելու ժամանակ հավաքել սեղի, փշփշուկի և այլ մոլախոտերի արմատները և այլեր:

2) Աշնանացանից ազատվող հողամասերի վրա անմիջապես կատարել յերեսվար հետագա խոր վարով, հողամասը վարից հետո չփոցխել:

3) Գարնանը հողի քեշի ժամանակ կատարել կրկնավար:

5) Գարնանացանի համար նախապատ-

բաստված ցելերը յեթե աշնանը չեն ստացել
կրկնավար, ապա անհրաժեշտ և զարնանը կա-
տարել նախքան ցանքսը կրկնավար, իսկ յեթե
կրկնավար ստացել են, ապա զարնանը կատարել
թեթև փոցխում:

5) Շարքահերկ բույսերի բերքնավաքից հե-
տո կատարել խորը վար 20—22 սամ. խորու-
թյամբ:

գ) Խոզանի մեակնաբյուռը գարնանացանի համար

1) Իբրև կանոն բերքնավաքից անմիջապես
հետո կատարել խոզանավար (մոլախոտերի դեմ
պայքարելու ու ջրի կոտակման համար) 12—13
սամ. խորությամբ, խոզանավար կատարած ար-
տերն աշնանը խոր վարել 18—22 սամ. խորու-
թյամբ: Գարնանը կատարել թեթև փխրեցում
8—10 սամ. խորությամբ և ցանել:

2) Բացառիկ դեպքերում յերբ խոզանավար
չի կատարվում, կատարել ցրտավար 18—20
սամ. խորությամբ: Շրջանի մասշտաբով ցրտա-
հերկն ավարտել վոչ ուշ քան մեկը հոկտեմբերի:

3) Պոչուկով խիստ վարակված արտերը
զարնանը ցանել վերջին հերթին. աշնանը վա-
րելու դեպքում վաղ զարնանը փոցխել, մոլա-
խոտերը յենթարկել պրովոկացիայի, իսկ ցանքսի
ժամանակ կրկնավարել և ցանել:

3. ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄ

1) Մինչև աշունը կուտակված խառն աղբը գոխադրել դաշտ, աշնանը շաղ տալ հողի յերեսը և վարել:

2) Ձմեռվա ընթացքում կուտակված խառն աղբը մտցնել հողի մեջ կրկնավարից կամ վարից առաջ:

3) Աշնանացանի առաջ գրվող հողերում խառն աղբը մտցնել հիմնական վարի ժամանակ:

4) Ձմեռվա ընթացքում աղբը կուտակելու համար առանձնացնել հատուկ տեղեր, վորոնք պահպանված լինեն քամիներից, ձնից, վորտեղ կուտակել ամբողջ գյուղի աղբը և մոխիրը:

5) Սերմանոցների պարարտացումը կատարել լացառապես փթած գոմաղբով մեկ հեկտարին 50—80 սալ (ձիու գոմաղբը չոգտագործել):

6) Շրջանում կառուցել 10 հորեր գոմի հյուսիսային կողմից անասունների մեզը և ժիժան կուտակելու համար, ոգտագործելով այդ պարարտացման նպատակով:

7) Մասսայական փորձի միջոցով անասունների մեզը հավաքել, սառեցնել և վաղ գարնանը տեղափոխել դաշտ:

8) Զրովի հողամասերում ջրի հետ միաժամանակ կատարել լրացուցիչ պարարտացում գո-

մաղբի և «գիշերային վոսկու» լուծույթով: Նորմա մեկ հեկտարին 2—3 տոննա գոմաղբ և «գիշերային վոսկի»: Զրից 5 որ առաջ 2—3 տոննա գոմաղբ կամ «գիշերային վոսկի» լուծել 3 տոննա ջրի մեջ:

9) Գարնանացանի ընթացքում միջնակների քանդելու ժամանակ, միջնակների խամ հողըն ոգտագործել վորպես սլարաբտանյութ փրռելով այն 10 սամ. շերտով ամբողջ արտում:

4. ՀԱՅԱԲՈՒՅՍԵՐԻ ՅԵՎ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՅԱԿՈՒՄԸ

1) Գարնանացանը կատարել 6—9 աշխատանքային որում խողանի վրա և 3—5 աշխատանքային որում ցելի վրա:

2) Վարի խորությունն այն հողերում, վորոնք հերկվում են գարնանը, ընդունել 18—20 սամ.:

3) Սերմի խորությունը գարնանացանի համար ընդունել 3—6 սամ., իսկ աշնանացանի համար 5—8 սամ. (թեթեվ հողերում՝ խորը, ծանր, ճմա հողերում՝ յերես):

4) Կորնզանի և վիկայի ցանքսը կատարել գարնանացանին զուգընթաց, ավարտելով վոչ ուշ քան մայիսի մեկը:

5) Սերմացույի նորման մեկ հեկտարի համար ընդունել Նոր-Բայազետի և Սարուխանի

յինթաշրջանների համար գարնանացան ցորեն 160 կիլո, գարի 180 կիլո Նոր-Քայազետի յինթաշրջանի համար, իսկ Սարուխանի յինթաշրջանի համար 170 կիլո, Նորադուղի յինթաշրջանի համար գարնանացան ցորեն 170 կիլո, գարի 180 կիլո, Հաջիմուխանի յինթաշրջանի համար գարնանացան ցորեն 170 կիլո, գարի 190 կիլո, աշնանացան ցորեն ուկրաինկա 190 կիլո (թեթեւ հողերում ցանել մինիմումը, իսկ ծանր հողերում մաքսիմումը):

Կորնզանը բոլոր յինթաշրջանների համար մեկ հեկտարին ցանել 110 կիլո: Վիկան 100 կիլո մաքուր և 70 կիլո վարսակ կամ գարի, ընդամենը խառնուրդ 170 կիլո:

6) Գարնանացանը կատարել շաբաթացանով, շաղացանը թույլատրվում և կատարել հողրածնի և ՄՏԿ-ի հատուկ թույլատրվածությամբ, մեքենայացման միանգամայն անհարմար հողերում:

7) Ցանքսից հետո բոլոր թեթեւ ավազային հողերը տափանել, իսկ մնացած հողերը 2-3 յերես փոցխել զիզզազ փոցխով:

8) Զրովի հողամասերում կորի զցելը կատարել ցանքսին զուգընթաց:

9) Բոլոր հացաբույսերի քաղհանը կատարել սլարտադիր, այնքան անգամ, վորպեսզի մինչև խողովակ կազմելը, տվյալ ցանքսը լինի

մաքուր մոլախոտերից, քաղհանված մոլախոտե-
րը դուրս հանել դաշտից և այրել:

10) Այն հողամասերը, վորոնք վարվում են
տրակտորային գութաններով, շրջադարձներում
և գլխավարերում տալ լրացուցիչ գլխավար:

11) Գարնանը և աշնանը վարելահողը ամ-
բողջութեամբ մաքրել յեղած քարերից, հանե-
լով նրանց վարելահողից դուրս (ոգտագործել
Ղուլալի կոլխոզի փորձը): Վերացնել բոլոր յե-
ղած միջնակները:

12) Յեղած դարաչոփներում մոլախոտերը
հնձել մի քանի անգամ, մինչև նրանց սերմա-
կալելը:

13) Աշնանացանը սլարտադիր կերպով կա-
տարել վաղ ցելի վրա, ուկրաինկայի ցանքսի
ժամկետը սահմանել ոգոստոսի 15-ից 25-ը, իսկ
աշորային՝ սեպտեմբերի 5-ը:

14) Բոլոր ջրովի հողամասերում աշնանա-
ցանը ցանքսից հետո ջրել:

15) Վաղ գարնանը կատարել աշնանացանի
փոցխում զիզզագ փոցխով, ցանված շարքերի
հակառակ ուղղութեամբ:

16) Վորպես մասսայական փորձ բոլոր բրե-
զագներում կատարել գարնանացանի փոցխում
1—2 հեկտարի վրա, նրա թփակալման ժամանակ:

17) Սերմացու վիկա ստանալու համար

ցանքսը կատարել դարու հետ խառնված սերմա-
ցույով:

5. ԲԵՐՔԱՎԱՔ ՅԵՎ ՊԱՅԲԱՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՍ

1) Բերքհավաքից 25 որ առաջ ավարտել
վերանորոգումը և կարգավորել գյուղգործիքներն
ու մեքենաները, հարմարեցնել հատիկ վորսող-
ները:

2) Ապահովել դաշտային պահակների հըս-
կողությունն ամբողջ գյուղի և սոցսեկտորի
ցանքադաշտերի վրա:

3) Խոտհնձից 10 որ առաջ ավարտել միջ-
գյուղյան և միջդաշտային հանապարհների, կա-
մուրջների վերանորոգման աշխատանքները:

4) Նախքան մեքենաների դաշտում աշ-
խատելն արտի յեզրի քարքարոտ հատվածների
հունձը և հավաքը պետք և կատարել պերանդի-
ներով:

5) Ապահովել բերքհավաքի բոլոր մեքենա-
ները (հնձիչ մեքենա, կալսիչ մեքենա, կոմբայն)
հատիկակալներով, աշխատանքի ընթացքում
պարբերաբար ստուգել և դատարկել կուտակված
հատիկները:

6) Հացարույսերի բերքհավաքը կատարել
ըստ առանձին հողամասերի հասունացմանը,
չսպասելով ամբողջ դաշտի հասունացմանը:

7) Սահմանել բերքհավաքի հետեվյալ ժամկետներն ըստ կուլտուրաների՝

ա) Ուկրաինկայի բերքհավաքը կատարել նրա մոմային հասունացման վերջին շրջանում 3—5 որում:

բ) Տարեկանի բերքհավաքը 8 որում:

գ) Գարնանացան ցորենի բերքհավաքը կատարել մոմային հասունացման և լրիվ հասունեացման անցման շրջանում 6—8 որում:

դ) Գարու բերքհավաքն սկսել մոմային հասունացման ժամանակ, յերբ հասկը դեղնում է 8—10 որում:

8) Կոմբայնի համար նախապատրաստել համապատասխան հողային մասսիվ, վորտեղից դուրս հանել բոլոր քարերը, վերացնել յեղած միջնակները, փոսերը և դարաչոփերն ամենավաղ դարնանից:

9) Հնձված հացաբույսերը պարտադիր կերպով կապել խուրձեր և տեղափոխել դաշտից վոչ ուշ յերկու որից: Ազատվող հողամասը դնել անմիջապես խոզանավարի տակ:

10) Բարդոց դնելիս պահպանել հետևյալ կանոնները.

ա) Սուրճերը դասավորել հասկերով դեպի ներս.

բ) Բարդոցները դաշտում դասավորել մեկ

ընդհանուր գծի վրա, վոր հնարավոր լինի հըն-
ձի աշխատանքներին զուգընթաց կատարել յե-
րեսվար:

գ) Բարդոցները դնելուց հետո ամբողջ
դաշտը փոցխել ձիու կամ ձեռքի փոցխով: Դաշ-
տում մնացած հասկերը հավաքել ձեռքով:

11) Արգելել խոնավ սերմացույի և հասիկի
տեղափոխումը պահեստ, նախքան տեղափոխե-
լը—այդպիսին փոել և չորացնել:

12) Սայլում դասավորելուց հետո յուրա-
քանչյուր բարդոցի տեղը մաքրել փոցխով:

13) Դաշտում բարդոցներ և խուրձեր ու-
նենալու դեպքում արգելել անասունների արա-
ծացումը:

14) Կալսումը պետք է սկսել հացհնձի աշ-
խատանքներին զուգընթաց, այն հաշվով, վոր
հնձի աշխատանքներն սկսելուց վոչ ուշ քան
նրա Յ-րդ որն սկսված լինեն նաև կալսման աշ-
խատանքները: Կալսումը կատարել ըստ բրի-
գադների:


15) Թաց քյուլաշը թույլ չտալ կալսիչի
մեջ լցնելու: Նման դեպքերում անհրաժեշտ է
քյուլաշը փոել, չորացնել և հետո նոր կալսել:

16) Սահմանել կալսիչի յերկու հերթի աշ-
խատանքները:

17) Կալսիչ մեքենաներին հարմարեցնել
տրիերները, դուրս դնել կալսման հետ
զուգընթաց:

1717

Հաս
1717



18) Կամերով կալսված մասը (թեղը) արգելվում է մեկ որից ավել թողնել առանց քամհարի:

19) Բոլոր կոլտնտեսություններում ունենալ համապատասխան կշեռքներ ու կշռաքարեր, չընդունել կալից դուրս յեկած վոչ մի կիր հատիկ առանց կշռելու:

20) Բերքհավաքի աշխատանքներն ավարտել 13 աշխատանքային որում:

21) Շրջանի 10 կոլխոզներում ունենալ հատուկ հացահատիկների չորանոցներ:

6. ԿԱՐՏՈՓԻԼԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հողամասի նախապատրաստումն և պատրաստումն աշխատանքները

1) Կարտոֆիլին հատկացվող հողամասի վարը կատարել աշնանը (յեթե հացահատիկի տակ է յեղել, հնձից հետո կատարել խոզանավար, իսկ աշնանը՝ խոր վար), չփոցխել մինչև գարուն:

2) Աշնան վարը թե ջրովի և թե դեմի հողամասերում կատարել՝ Նորադուզի և Նոր-Բայազետի յենթաշրջաններում 18—20 սանտիմետր, Մարուխանի 20—22 սանտիմետր և Հաջիմուխանի յենթաշրջանում 20—24 սանտիմետր խորությամբ:

3) Հողամասը թարմ գոմաղբով պարար-

տացնել աշնանը, նախքան խոր վար կատարելը
 կամ վարից հետո փռել վարված հողի յերեսը:
 Մոխիրով և աղբով պարարտացումը կատարել
 գարնան կրկնահերկից առաջ, փռել մոխիրը
 դաշտի յերեսը և հետո կատարել կրկնահերկ
 10—15 սանտիմետր խորությամբ, յեթե մոխի-
 րի պակաս և զգացվում, պարարտացումը մոխրով
 կարելի չէ կատարել առաջին բուկ տալու ժա-
 մանակ, շաղ տալով յուրաքանչյուր թմբի վրա
 առանձին-առանձին: Այլված գոմաղբով կարելի
 չէ պարարտացնել գարնանը, նախքան կրկնա-
 հերկ կատարելը: Մինչև պարարտացումը բոլոր
 պարարտանյութերը պետք է պահել անձրևներից
 ապահով տեղ:

Պարարտացման նորմա մեկ հեկտարի հա-
 մար ընդունել խառն աղբ և մոխիր 50 տոննա,
 իսկ գոմաղբ՝ 18—25 տոննա:

4) Կարտոֆիլի ցանքը կատարել մասսիվ
 հողակտորներով, հատկացնելով դրանից յուրա-
 քանչյուր բրիգադին առանձին հողակտորներ:

5) Այն հողամասերը, վորտեղ ցանված
 կարտոֆիլը վարակված է յեղել փոշիացող քոս
 հիվանդությամբ կամ լարավորդով 2—5 տարի
 տեվողությամբ կարտոֆիլ չմշակել, որտազոր-
 ծել այդ հողերը այլ կուլտուրաների համար
 (այդ հողերում չցանել նաև կերի ճակնդեղ և
 գազար):

ՍԵՐՄԱՑՈՒՅԻ ՆԱԽԱՂԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1) Սերմացուն ոգտագործել առողջ (միջին քաշ 50—100 գրամ) ու մեծություն ունեցող կարտոֆիլի պալարները: Ցանվող կարտոֆիլը ջրկել ըստ պալարի գույնի: (Սպիտակ, կարմիր, կապույտ և ըստ նշված գույնի առանձին հողա-կտորներում ցանել):

2) Ցանքսի համար մեկ հեկտարին ընդունել ջրովի հողամասերում Նորադուղի և Ն-Բայազետի յենթաշրջանների համար 20 ցենտներ, իսկ Սարուխանին՝ 18 ցենտներ, դեմի հողամասերում բոլոր յենթաշրջաններում 22—23 ցենտներ:

3) Ցանելու ժամանակ, յեթե կարտոֆիլը ծլած աչքեր ունի, անհրաժեշտ է զգույշ լինել տնկելիս, վոր մատղաշ ծիլերը չփխսվեն:

4) Արգելվում է փոշիացող, քոս, սնկային հիվանդություններով վարակված կարտոֆիլը ոգտագործել իբրև սերմացու:

8. ԿԱՐՏՈՓԻԼԻ ՅԱՆՔՍ

1) Աշնան վարած հողն անհրաժեշտ է կրկնահերկ կատարել 15 սանտիմետր խորությամբ և հավաքել բոլոր մոլախոտերը:

2) Ցանքսը կատարել վաղ գարնանը, յերբ հողը քեշի յե յեկել, սկսելով ապրիլի 5-ից վերջացնելով վոչ ուշ մայիսի 10-ը:

3) Զրովի հողերի մեջ, շարքային հեռավորությունն ընդունել 70 ստմ., իսկ միջբույսերի 45 ստմ. դեմի հողերում՝ միջշարքային հեռավորությունն ընդունել 60 սանտիմ. իսկ միջբույսային 40—45 սանտիմ.

4) Թեթեվ ավազային հողերում պալարը տնկել 10—12 սանտիմ, իսկ սեվահողերում և ծանր կավային հողերում 8—10 սանտիմ. խորությամբ:

5) Խոնավ հողերում կարտոֆիլի ցանքսը կատարել ժապավենաձև:

6) Մեկ բնում տնկել միայն մեկ պալար:

9. ԿԱՐՏՈՓԻԼԻ ԽՆԱՄԲԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ

1) Կարտոֆիլի առաջին ծիլերը յերեկալուց անհրաժեշտ է կատարել մեկ յերես փոցխում զիգղագուլ, նախ փոցխելու միջոցով կշարդվի անձրևներից առաջացած հողի կեղեվակալումը, միաժամանակ փոցխի ատամները դուրս կհանեն նորածիլ մոլախոտերը: Փոցխի հետեվանքով հատուկեմա դուրս յեկած կարտոֆիլի ծիլերը նորից տնկել նույն տեղում:

2) Քաղհանն ու փխրացումը կատարել վոչ պակաս 3 անգամ: Քաղհանը կատարել հողորազներով:

ա) Առաջին քաղհանն ու փխրացումը կատարել յիրը կարտոֆիլի թումբը ունի 10—15 սանտիմ. բարձրություն:

բ) Յերկրորդ քաղհանն ու փխրեցումը կատարել առաջին քաղհանից 15 որ հետո:

Յերրորդ քաղհանը կատարել կարտոֆիլի ծաղկման շրջանում:

3) Դեմի հողերում բուզ պետք է տալ մեկ անգամ, յերբ թուփն ունի 15 սանտիմ. բարձրություն, իսկ փխրեցումն ու քաղհանը կատարել վոչ պակաս 3 անգամ, վերը նշված ժամկետներում:

4) Զրովի հողերում բուզ տալ յերեք անգամ:

ա) Առաջին բուզը տալ բույսի թփի 15 սամ. բարձրությամբ:

բ) Զ-րդ բուզը տալ 2-րդ քաղհանի հետ զուգընթաց այն հաշվով, վոր ավարտվի նախքան կարտոֆիլի ծաղկելը:

5) Առաջին շուրջ տալ առաջին քաղհանից 5 որ առաջ: Յերկրորդ շուրջ հուլիսի 5—10 վոչ ուշ, 3-րդ շուրջ՝ ոգոստոսի 5—10-ը:

6) Կարտոֆիլի 2-րդ ջրի հետ միասին կատարել կարտոֆիլի լրացուցիչ պարարտացումը: Մինչ շուրջ 5 որ առաջ հողակտորի վերին մասում պատրաստել հոր, ձեփել կավով և պատրաստել լուծույթ, այդ լուծույթը թթվելուց հետո 5 որ անց ամեն մի քովի վրա ածել մեկ լիտր ու վրան տալ հող. լուծույթի նորման ընդունելը 2—3 տոննա զոմաղբ, «գիշերային վոսկի» և 4—5 տոննա շուր:

10. ԲԵՐՔՀԱՎԱՔԸ ՅԵՎ ԱՄԲԱՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1) Բերքհավաքն սկսել հոկտեմբերի 10-ից և վերջացնել հոկտեմբերի 20-ին, բերքհավաքի տեվոդուլթյունը սահմանել 10 որից վոչ ավել:

2) Սերմացույի համար նախատեսված հողակտորների բերքհավաքը կատարել ըստ կարտոֆիլի հասունացմանը:

3) Բերքհավաքի ժամանակ ջրկել սերմացու կարտոֆիլն ըստ քաշի ու գույնի, կարմիր և կապույտ գույնի կարտոֆիլը, համեմատած սպիտակ գույն ունեցող կարտոֆիլի հետ, անհամեմատ ավելի վատ է ձմեռում:

4) Բերքհավաքից մեկ ամիս առաջ ավարտել կարտոֆիլի պահպանման համար ոգտագործվող պահեստատեղերի, ողանցքների, տարայի վերանորոգման ու արտահանման աշխատանքները:

5) Պահպանումը կատարել բուրտերում ու հատուկ պահեստներում:

6) Բուրտի պատրաստման համար ընտրել թեք հողամաս, ստորերկրյա ջրերից հեռու, յերկարությունն ընդունել 20 մետր, յերեսի լայնությունը մեկ ու կես մետր, հիմքի լայնությունը մեկ մետր, խորությունը կես մետր, փորվածքը տաշտածև:

7) Կարտիֆիլի շերտի բարձրութիւնն ընդունել մեկ մետրից վոչ ավել:

8) Յեթե սերմացու կարտիֆիլի պահպանումը կատարվում է պահեստներում, ապա ձրմեռվա ընթացքում կատարել 2—3 անգամ ընտրութիւն, հիվանդ պալարները հեռացնելու պայմանով:

11. ԿԵՐԻ ԶԱԿՆԳԵՂԻ ՄՃԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1) Կերի ճակնդեղի համար հատկացնել հողամասեր, փորտեղ ցանված ելին խոտարույսերը, ընդեղենները, աշնանացանը, կամ կատարված եր ցել:

2) Յեթե հատկացված հողամասը յեղել է ցել, ապա դարնանը շուտ յերկու յերես փոցխել, ցանքսի որը կատարել յերեւիւար 8—10 սամ, խորութիւնը և փոցխել:

3) Ճակնդեղի հողի նախապատրաստումը և ցանքսն սկսել հացահատիկային կուլտուրաների մասսայական ցանքսից 3—4 որ հետո:

4) Ճակնդեղի ցանքսը կատարել շարքերով (շարքը-շարքից 20 սամ.), շարքերը քաշել լարով: Արգելվում է շաղացանով կերի ճակնդեղի ցանքսի կատարումը: Ցանքսի խորութիւնը սահմանել ծանր հողերում 3 սամ., իսկ թեթև հողերում 4 սամ.:

5) Ճակնդեղի տերեւները յերեւալուն պես

կատարել 1-ին նոսրացում, թողնելով բույսը
բույսից 20 սամ. հեռավորությամբ:

6) Առաջին ջուրը տալ նոսրացումից տաս-
որ անց (հունիսի 15—20-ը), յերկրորդ ջուրը
տալ հուլիսի սկզբներին, յերրորդ ջուրն սկսել
2-րդ ջրից 20—25 որ հետո:

7) Յուրաքանչյուր ջրելուց 3—4 որ հետո
կատարել քաղհան և փխրեցում:

8) Բերքնալաքն սկսել հոկտեմբերի 15-ից:

12. ԿԱՂԱՄՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ

1) Կաղամբի ցանքս-սածիլ ստանալու հա-
մար կատարել ապրիլի վերջին:

2) Սածիլը տեղափոխել զաշտ այն ժամա-
նակ, յերբ նրա մեծությունը լինում է 15—20
սամ. և նա ունենում է 3—4 տերևներ:

3) Սածիլը անկել առավոտյան, անկելուց
հետո անմիջապես ջրել:

4) Կաղամբի մշակությունը տանել հարթ
մարզերում, հողն աշնանից նախապատրաստել,
կատարելով խորը վար մինչև 20 սամ. խորու-
թյամբ:

5) Կաղամբի քաղհանը կատարել սիստե-
մատիկաբար—առնվազն 5 անգամ:

6) Կաղամբի ջուրը տալ մինչև սեպտեմբեր
ամիսը մեկ անգամ, իսկ այնուհետև, յերբ նա-
կկազմակերպի գլուխ—ջրել 2—3 որը մեկ անգամ:

7) Կաղամբի վրա թրթուր նկատելիս անմիջապես կատարել բուժում:

8) Մրսկում կատարել վոչ արեվոս որերին անալոսյան:

9) Կաղամբի բերքնավաքից 15—20 որ շուտ հեռացնել բոլոր նեքի անպետք տերևները:

10) Կաղամբի բերքնավաքը կատարել հոկտեմբերի վերջին:

13. ՄԻԼՈՍԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1) Միլոսային կուլտուրաների (արևածաղիկ, յեգիպտացորեն) ցանքսը կատարել վոչ առ մայիսի 20-ից:

2) Ցանքսի նորման մեկ հեկտարի համար քնդունել արեվածաղիկ՝ 35 կիլո, յեգիպտացորեն՝ 50 կիլո:

3) Միլոսային կուլտուրաների բերքնավաքը կատարել նրանց ծաղկման շրջանում (ոգոստոսի սկզբներին):

14. ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1) Խոտհարքները մաքրել քարերից գարնանը, յերբ խոտի բարձրությունը 10 ստմ. ալել չի և աշնանը խոտհնձից հետո:

2) Այն խոտհարքները, վորոնք չեն տալիս

անհրաժեշտ քանակութեամբ բերք, դարնանը կատարել յենթացանքս խոտաբույսերի միջոցով:

3) Սոսնորքների պաշտպանութեան համար մայիսի 2-ից սահմանել պահակութեան, թույլ չտալով թե անասունների և թե մարդկանց մուտքը:

4) Սոսնունձը կատարել տվյալ սահմանի 500⁰ -ի ծաղկման ժամանակ:

5) Պարտադիր կերպով ոգտազործել խոտհունձ մեքենաները, տալով նրանց լրիվ բեռնը վաճառելու:

6) Հնձված խոտը տեղափոխել խոտոմներով:

7) Սոսի դեզ դնել 70 սայլ քանակութեամբ հյուսիս-հարավ ուղղութեամբ: Գեղերի միջև տարածութեանը պետք և լինի 5 մետր:

8) Սահմանել արոտների հերթական ոգտադործումը, վորի համար արոտները բաժանել վանդակների, կերցնելով յուրաքանչյուր վանդակն առանձին:

9) Գարնանը ցեխի ժամանակ, անասունների արածացումը կատարել ցրված ձեղով, հարթավայրերում, վորպեսզի արոտները չփչանան:

10) Հոգնած արոտները գարնանը փոցխել:

11) Կազմակերպել գիշերային արոտի խընդիրը:

12) Վիկայի և Արմենի քաղը խոստի համար կատարել նրա ծաղկման ժամանակ, յերբ ծաղիկները դեռ չեն թափվել:

15. ՊԱՅԳԱՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ

1) Համարել պարտադիր կոլտնտեսություններում և մենատնտեսական հատվածում պայքարը ֆնասատուներով վարակված տարածությունների վրա (մուկ, կարադրինա, թրթուռ և այլն):

2) Պարտադիր կերպով կատարել հողերի վարակում մկնդեզով, մկների դեմ պայքարելու նպատակով:

3) Վնասատուների դեմ պայքարելու համար գյուղխորհուրդները, կոլխոզվարչությունները պարտավոր են տրամադրել անհրաժեշտ քանոթ և պահանջվող բոլոր նյութերը (ալյուր, ճարպ, թեփ, կեր և այլն):

4) Վաղ գարնանը բոլոր հողամասերում հետազոտել, պարզել մկներով վարակվածությունը և ըստ այնմ կազմակերպել պայքարը:

5) Բոլոր պահեստների նկատմամբ կատարել զազային ախտահանում:

16. ՑԱՆԲԱՇՐԶԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

1) Գտնել անհրաժեշտ 1937 թ. ընթացքում շրջանի բոլոր գյուղերում կատարել ցանքաշրջանառության գործնական աշխատանքները:

ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈՎԱՆՈՆՆԵՐ ՊՏՂԱՏՈՒ ՏՆԿԱՐԱՆԻ

1. ՊՏՂԱՏՈՒ ՏՆԿԱՐԱՆԻ ՏԵՂԻ ԸՆՏՐՈՒ- ԹՅՈՒՆԸ

Տեղի ընտրութեան հարցն ունի վճռակա-
նշանակութիւն այն տեսակետից, քանի վոր
գրանից ե կախված հետագա աշխատանքների
վողջ հաջողութիւննը:

1) Ի՞նչ ե պահանջվում տնկարանից.

ա) Տնկարանին հատկացնել վորքան հնա-
քավոր ե կենտրոնին մոտիկ հողամասեր:

բ) Հողամասը պետք ե լինի հարթ, վոր-
պեսզի ապահովվի նախ բույսի աճեցողութիւ-
նը ե յերկրորդ՝ մեխանիզացիայի անարգել կի-
րառումը: Անհրաժեշտ ե տնկարանի հողամասն
ընտրել քիչ նկատելի հարավային թեքութեան
վրա (գյուղնե):

գ) Պտղատու տնկարանն անպայման պի-
տի ապահովված լինի ջրով, ազատ պիտի լինի
ստորերկրյա ջրերից, վորոնք մոտ են գտնվում
հողի վերին շերտերին:

դ) Տնկարանի հողամասը պիտի ապահով-

ված լինի ցուրտ և խիստ քամիներից, պատ-
նեշնէր (բնական կամ արհեստական):

2) Տեղն ընտրելիս ղեկավարվել:

Տնկարանի համար անհրաժեշտ պայմաններ.

ա) Մննդարար նյութերով և հողի ակտիվ
շերտով (վարելահող հարուստ):

բ) Թեթե հողեր՝ խուսափել ծանր կավա-
շին հողերից:

գ) Մուխտտներից ազատ հողեր:

դ) Յենթահողը պիտի լինի շրաթափանց
(լծացում տեղի չունենա):

3. ՏՆԿԱՐԱՆԻ ՀՈՂԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

ա) Հողամասն ընտրելիս հաշվի առնել՝ լա-
վագույն նախորդողներ. այն ե՛ շարքահերկ կուլ-
տուրաները, վիկա և այլն:

բ) Տնկարանի համար անհրաժեշտ ե հողի
խորը մշակութուն 20 սոմ., իսկ ձեվավորման
հողամասում՝ վայրակներ տնկման համար 25
սոմ. վոչ պակաս:

գ) Հերկի ժամանակը տարրեր ե՛ յեթե ցան-
քը արվելու յե գարնանը կամ վայրակներ տնկե-
լու՝ հողամասը անսպասան աշնանը հերկել, գար-
նանը կրկնահերկ կատարել: Սշնանը տնկելու դեպ-
քում նախորոք գարնանը, կամ ամառվա կեսին:

4. ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ

ա) Վորպես կանոն, տնկարանը լավ պիտի պարարտացնել, սրա կարիքը չի զգացվում միայն տնկարանի գոյության առաջին տարին, պարարտացնել գոմադրով հեկտարին 40 տոնն (80 սալ):

բ) Հանքային պարարտանյութեր.

1. Սուպերֆոսֆատ.

2. Բլորական կալիում.

3. Ծծմբաթթվային ամոնյակ:

4. ՍԵՐՄԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՑՈՒՄԸ ՅԱՆԲԻ ՀԱՄԱՐ

Ցանքը կարելի չե կատարել թե դարնանը և թե աշնանը, լավ ե աշնանը, դարնանը ցանելու համար սերմերը յինթարկել ստրատիֆիկացիայի, տեխնիկան՝ ավազը նախորոք ըվանալ մաքրելով տիղմից, սերմերը խառնել ըվացած ավազի հետ ըստ ծավալի մեկ մաս սերմ, 3 մաս ավազ. լավ խառնել փայտե արկղի կամ տողրակների մեջ և խառնուրդը պահել մառանում կամ բնակելի շենքերում, (ցնցուղով) հաճախ ջրիչ պահպանել նորմալ խոնավությունը Այնուհետև այդ ամաններով սերմերը թաղել հողի կամ ձյան մեջ, ստրատիֆիկացիայի նպատակն է՝ սերմերը վաղ դարնանը ծլելու առաջնառնելը սառնամանիքներից ապահովված լինելու համար, այս աշխատանքը ավարտել աշնանը

6. ԻՆՉՊԵՍ ԿԱՅԱՐԵԼ ՑԱՆԲԸ

ա) Ցանքը կարելի չե կատարել և սերմանոցում
և կամ անմիջապես տնկարանում, հնգավորների
ցանքը կատարել սերմանոցում մարզերով, վորն
ունի 15—20 մետր յերկարություն և 120—150
մետր լայնություն, ցանքի սկոտները լինեն
մարզի լայնքի ուղղությամբ, ցանքից հետո
սերմերը անմիջապես ծածկել հողով և ջրել, իսկ
նախքան այդ փխրեցնել. հարթել և տափանել
Ցանքը մարզերում կատարել շարքերով խմ-
բերին ղուգահեռ, յերեք շարք միմիանցից 90 սմ.
հեռավորության, յերկուսը թմրերի տակ, մեկը
կենտրոնում (լարի միջոցով): Կորիզները ցանել
3—4 ստմ. խորությամբ՝ նայած սերմի մեծու-
թյանը, հնգավորները 2-3 ստմ. (խնձոր, տանձ):

7. ՑԱՆԲԻ ԽՆԱՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՍԵՐՄՆԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ

ա) Յերբ արգեն ծիլերի վրա առաջացել են
մեկ զույգ իսկական տերեփներ, անալոյման կա-
տարել առաջին նոսրացումը՝ թողնելով բույսե-
քը միմիանցից 2 ստմ. հեռավարության վրա
1-ին նոսրացումից մոտ 15-20 որ հետո կա-
տարել յերկրորդ նոսրացումը, թողնելով բույսե-
քը 5 ստմ. հեռավարության վրա, այս բոլորի
հետ միասին կատարել փխրեցում և պայքաթ

մոլախոտերի դեմ, նոսրացման ժամանակ հան-
ված բույսերն անպայման ոգտագործել. պա-
հանջվող տեղերում լրացում կատարելու:

8. ՎԱՅՐԱԿՆԵՐԻ ՀԱՆԵԼԸ ՅԵՎ ՏԵՍԱԿԱ- ՎՈՐԵԼԸ

1. Սերմնարույսերը կարելի յե հանել և
գարնանը և աշնանը, յերբ տերեփները դեղնել-
թափվել են և անմիջապես տնկել ձևավորման
հողամասում նախորոք տեսակավորելուց հետո:

9. ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) Տնկարանի հողամասում ամառվա ըն-
թացքում 6-8 անգամ քաղհան կատարել, կամ
հողի մակերեսային փխրեցում, վորպեսզի ապա-
հովվի՝

1. Խոնավության պահպանումը.
2. Մոլախոտերի դեմ պայքարը.
3. Հողի կեղեվակալմանը խանգարելու:

10. ՎԱՅՐԱԿՆԵՐԻ ՏՆԿԵԼՆ ՈՒ ԽՆԱՄԲԸ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ

ա) Տնկարանում աճեցրած վայրակները
գարնանը վերատնկել ձեվավորման դաշտում
այդ նպատակի համար անհրաժեշտ են՝

1. Գույլեր, վայրակներ մատուցելու համար,
վորի մեկ չորրորդական մասը լցված լինի ջրով:

2. Մետաղյա լարեր նշանաչափերով:

3. Փայտյա թակ (թակիչ) ցցերն ամրացնելու համար և բահեր:

Տնկելու ժամանակ վայրակները հողի մեջ թաղել մինչև արմատավզիկը:

11. ՊԱՏՎԱՍՏԱԾ ԲՈՒՅՍԵՐԻ ԽՆԱՄԲԸ

Վաղ դարնանը նախքան բողբոջների բացվելը վայրակի վերին մասը կտրել, պատվաստից 12—15 ստմ. բարձրության թողնված մասը կոչվում է բութակ (յեղրենդ), պարտադիր կերպով պիտի վոչնչացնել վարյակի բոլոր բողբոջները՝ աղնիվ-շվի յերկարությունը (նոր դուրս յեկած շիվը) յերբ հասնում է 7—8 ստմ. ճիլոպով կապել բութակից, յերկարելու հետ միասին 3 տեղից Գարնանը թուլացնել կապերը և հեռացնել ամբողջովին, կտարատվելուց ապահովելու նպատակով, ձեվավորման ժամանակ բնի յերկարությունը — խնձորի համար (ուղղաձիգ սաղարդ 60—70 ստմ., իսկ փռված սաղարդի համար 70—80 ստմ., տանձենու համար 50—60 սանտիմետր:

13. ՏՆԿԻՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

1) Տնկիները պիտք է ունենան՝

ա) Բնի անհրաժեշտ բարձրությունն և լավ աճած սաղարթ.

բ) Լավ արմատային սխտեմ.

դ) Լավ հասունացում.

դ) Առանց մեխանիկական վնասվածքների:

Տնկիները պետք է հանել նախորոք պլանավորված ձեվով և նախորոք պիտի ունենալ հարմար հողամաս, անհրաժեշտ քանակությամբ բնավորական ուժ, գործիքներ, փոխադրական միջոցներ: Վորպես կանոն տնկիները պիտի հանել աշնանը, ծայրահեղ դեպքում միայն դարնանը, վորովհետև փոխադրելիս ամենափոքր ուշացումն անգամ կարող է պատճառ դառնալ չորացման:

Հետագայում ծառերի վնասատուներից և այլ հիվանդություններից ապահովելու նպատակով բները պիտի սպիտակեցնել կրով, միաժամանակ դանազան սրսկումներ անել, յեթե այդ անհրաժեշտ է:

Ձեվավորման հողամասում առանց մասնագետ ագրոնոմի անմիջական ցուցմունքների վոչ մի դեպքում ձեվավորում չկատարել, վորովհետև սա ևս իր հերթին կարևոր ագրոձեռնարկումներից մեկն է, վորը մեծ նշանակություն ունի հետագայում բերքի քանակի և վորակի տեսակետից:

Նոր գցած յերկուսից յերեք տարեկան այդում բավական է ծառաշարքի յերկու կողմից յերկուսեկան ակոս գցել ջրելու համար, այդ ակոսները անց են կացվում ծառերից կես մետր հեռու:

Զրեկ մայիսի 2-րդ կեսից սկսած 15 որ
քնդմիջումներով, ջրելիս անպայմանորեն հաշ-
վի առնել հողի դրությունը, խոնավության
աստիճանը և այլն: Զգուշ լինել ավելորդ ջուր
աալուց, վերովհետև այդ կարող է ֆուսսակար
ազդեցություն ունենալ բույսերի համար:

Սույն պարտադիր ագրոկանոնների հսկո-
ղությունը, ինչպես և խախտման դեպքերի հայտ-
նարերման ամբողջ պատասխանատվությունը
դրվում է Գ. Ս.-ի արտադրական սեկցիաների,
դատախազական ոժանդակ խմբակների, հողբաժ-
նի և ՄՏԿ-ի ագրոպերսոնալի վրա, լորոնց կազմած
արձանագրությունների հիման վրա շրջագործկոմի-
նախագահությունը վորոշում է վարչական ներ-
գործության չափը, սույն պարտադիր ագրոկա-
նոնները տարածվում են ամբողջ շրջանի վրա:

Սույն պարտադիր ագրոկանոնները ուժի
մեջ են հրապարակման որից մեկ տարի ժամա-
նակով:

Երջանային գործադիր կոմիտեյի նախագահ՝
Ս. ՄԱՐԿՈՍՅԱՆ

Երջանային գործադիր կոմիտեյի ֆարսուղար՝
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



' FL0045314

[124.]

197

A ^I
8445

Handwritten text, possibly a signature or date, in purple ink, partially obscured by a diagonal line.